ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

Ն Ա Խ Ա Գ Ա Հ

Հ Ր Ա Մ Ա Ն

«07» Մայիսի 2026 թ. N 63-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 1-Ի N 47-Ա ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 748-Լ որոշման հավելվածի 16-րդ կետի 2-րդ ենթակետը և հաշվի առնելով Ճարտարապետության և շինարարության ազգային համալսարանի 2026 թվականի ապրիլի 27-ի N Ե/432-26 գրությունը.

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2026 թվականի ապրիլի 1-ի «Քաղաքաշինության բնագավառում շարունակական մասնագիտական զարգացումն ապահովող միջոցառման ծրագրի հաստատման և կրեդիտների շնորհման մասին» N 47-Ա հրամանում կատարել հետևյալ փոփոխությունը.

1) 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «Հաստատել Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի կողմից 2026 թվականի փետրվարի 24-ին ՀՀ քաղաքաշինության կոմիտե ներկայացված՝ քաղաքաշինության բնագավառում նախատեսվող շարունակական մասնագիտական զարգացումն ապահովող «Autodesk Civil 3D ծրագրակազմի կիրառումը ջրային տնտեսությունում» միջոցառման ծրագիրը և ծրագրին շնորհել 15 կրեդիտ:

2) 1-ին կետից հետո լրացնել նոր՝ 1.1-ին կետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«1.1 Հաստատել «Autodesk Civil 3D ծրագրակազմի կիրառումը ջրային տնտեսությունում» միջոցառման իրականացման ժամանակացույցը՝ համաձայն Հավելվածի:»:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում այն ընդունելու մասին միջոցառման կազմակերպչին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

5/7/2026

X

ԵՂԻԱԶԱՐ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Signed by: VARDANYAN YEGHIAZAR 2614790133

Ե. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Հավելված
ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի

2026 թվականի Դեկտեմբեր 07 **-ի N** 63 **-Ա հրամանի**

«Autodesk Civil 3D ծրագրակազմի կիրառումը ջրային տնտեսությունում»

միջոցառման ժամանակացույց

Հ/Հ	Ամսաթիվ	Ժամ	Թեմայի անվանում	Միջոցառման պատասխանատու	Դասընթացների անցկացման ձևաչափը և վայրը	Միջոցառման կրեդիտները	Հավաստագրման ենթակա համապատասխան մասնագիտությունը	Մասնակցության վճարի չափը
1	2	3	4	5	6	7	8	9
1	Մայիսի 5-21	18.00-20.30	«**Autodesk Civil 3D ծրագրակազմի կիրառումը ջրային տնտեսությունում**»	**Արեն Սողոյան**	Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան, Ք.Երևան, Տերյան 105, Ա 103 BIM լաբորատորիա	15 կրեդիտ	<u>1-ին կարգի մասնագետ, 2-րդ կարգի մասնագետ և 3-րդ կարգի մասնագետ</u> 15-22 մասնագիտություններ	90.000 դրամ